Արձանագրություն N 3

«ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/10-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Քաջարան «21» նոյմեբեր 2019թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝ Աշխեն Մարտիրոսյան
հանձնաժողովի անդամներ՝ Անահիտ Մարության
Վիկտորյա Կասպարյան
Արմեդա Վանեսյան
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան

<u>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին</u>

1. Ընդունել ի գիտություն.
Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ն, «Խաչպար»ՍՊԸ-ն, «Դեզսերվիս»ՍՊԸ-ն, «ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ»ՍՊԸ-ն և «Լևոն և Լամարա»ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.1. Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի համաձայն առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին:
«Դեզսերվիս»ՍՊԸ-ի կողմից № 12 չափաբաժնի համար ներկայացված ապրանքի տեղնիկական բնութագրում կային անհամապատասխանություններ, որը սահմանված ժամկետում շտկվել է մասնակցի կողմից:

1.2. Հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին տրամադրել է գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը:

1.3. Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ :

2. <u>Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին</u>

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/10-1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները և «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ի, «Խաչպար»ՍՊԸ-ի, «Դեզսերվիս»ՍՊԸ-ի, «ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ»ՍՊԸ-ի և «Լևոն և Լամարա»ՍՊԸ-ի հայտը գնահատել «բավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ :

<u>3. «ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ- 19/10-1» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին</u>

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/10-1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից են հայտարարվում «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ն, «Խաչպար»ՍՊԸ-ն, «Դեզսերվիս»ՍՊԸ-ն, «Մեդտեխսերվիս»ՍՊԸ-ն և «Լևոն և Լամարա»ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1.Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝

- № 8 չափաբաժնի համար «Խաչպար»ՍՊԸ-ին,
- № 9 և 12 չափաբաժինների համար «Դեզսերվիս»ՍՊԸ-ին,
- № 4 և 5 չափաբաժինների համար «Լևոն և Լամարա»ՍՊԸ-ին,
- № 1; 2; 6; 7 և 10 չափաբաժինների համար «Մեդտեխսերվիս»ՍՊԸ-ին,
- № 3 չափաբաժնի համար «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ին:

4.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի

- 3-րդ կետը № 2-8 և 12 չափաբաժինների համար անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր,
- 4-րդ կետը № 1; 9 և 10 չափաբաժինների համար անգործության ժամկետ չսահմանել :

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ :

Հանձնաժողովի նախագահ՝	.....	Աշխեն Մարտիրոսյան
հանձնաժողովի անդամներ՝	.....	Անահիտ Մարության
	.....	Վիկտորյա Կասպարյան
	.....	Արմեդա Վանեսյան
հանձնաժողովի քարտուղար՝	.....	Սահականուշ Գրիգորյան